

383  
06 APR 2010

# ԼԵՐՆԱԿԱՆՔ

Ա.

**Փ Ո Ւ Զ**

ԿԱՎԱՑՈՒՅԹ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ


ՀԱՄԵՄԸՆԿԵՐԱԿԵՆ ԱԶԳԵԳԳՈՒԹԵԱՆ

**ՈՒՐՈՒՍԻՒԲԻ**

ԳՐԵՑ

ԴՐ. ՏԵՇ-ՊՈՂՈՍԵԱՆ

— — — — —



**ՇՈՒՇԻ**

ոան Մ. Բաբաջանեանի, Թամիրեան փողոց № 5-

1910

Լ Ե Ռ Ն Ա Կ Ա Ն Ք

ՓՈՐՉ ԿՈՎԿԵՍԵԵՆ ԺԲՎԱՎՈՒԹՅԵՐԻ

ՀԵՄԵՄԵՏԵԿԵՆ ԱԶԳԵԳՐՈՒԹԵԵՆ

39  
S-50

ՕՎ

# ԼԵՐՆԱԿԱՆՔ

Ա.

ՓՈՐՁ

ԿԱՂԱՔԱՆԵՐՆ ԺՈՂՈՎՈՒԹԻՆԵՐԻ

ՀԵՄԵՐԱՏԵԿԵՐՆ ԱԶԳԵԴՐՈՒԹԵՐՆ

ՈՒՐՈՒՍԲԻ

ԳՐԵՑ

ԳՐ. ՏԵՂ-ՊՈՂՈՍԵԱՆ



24/9-54

ՇՈՒՇԻ  
Տպարան Մ. Բաբաջանեանի, Թամիրեան փողոց № 5.  
1910

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մինչև այսօր հայ բանասէրները չեն գրադւել կովկասիան ժողովուրդների և հայոց ազգագրական նիւթերի բաղդատութեամբ։ Ուստի անմշակ խնդիրներ են նոցակուլտուրական յարաբերութեան չափը, բնաւորութիւնը, գրգիչը և հետեանքը։ Միայն, կարծես պատահական կերպով, այդ մասին հատակոտոր նկատողութիւններ ունին այն ուսումնասիրութիւնները, որոնց բուն նիւթն է նկարագրել օսերի, չերքէզների, չիչենների, ինզուների, զումբիների, շապառուների և միւս ցեղերի լեզուն, կրօնական, ընտանեկան և գատարանական սովորութիւնները։ Այդպիսի հարեանցիօրէն նկատողութիւնները նոյնիսկ մատով վրայ կարելի է թւել։ Հակատհառողէնը յիշում է մի գաղութի աւանդութիւն, որը, Հայատանից զուբս գալով վերաբնակել է օսերի մէջ։ Փար. Տէր-Մովսիսեան համեմատել է հայկական և օսմանան տների կազմութիւնը։ Մ. Մ. Կովալևսկի ճանաչել է Գօշի գատաստանագրքի վրացական փոխազրութեան և լեռնցոց սովորութեան իրաւունքի մէջ նմանութիւն։ Դոքա են զլիաւորները և մի քանիսը ըստ կարգին<sup>1)</sup>։ Այդ ամլութիւնը բացատրում է երկու պատճառով, առաջին տեղը բննում է այն, որ հայոց ազգագրական գրականութիւնը աղքատ էր երկար ժամանակ։ Երկրորդ՝ Կովկասի ժողովուրդներից մի քանիսը, ինչպէս օսերը, շապսուները և չիչենները, քննադատութեան առաջ հանդիսացան նահապետական կեանքի այն աստիճան ան-

1) Սլարъ П. К.—„Լակскій“, „Афхазскій“ языки; Вс. Ф. Миллеръ—„Осетинские Этюды“; Д-ръ Файфъ—„Путешествие по Осетии“; Гакстгаузенъ—„Закавказский край.“; Փար. Տէր-Մովսիսեան—„Հայ գիւղական տունը“, Մ. Կովալևսկի—„Законъ и обычай на Кавказѣ“, „Родовой бытъ“ և այլն։



իւառն պատկերով, որ չէր կարելի ենթագրել, որ այդ ցեղերը որևէ կուլտուրայից ազդւած են նաև գայլից իւմբը: Սակայն այսօր թէ մէկ և թէ միւս հանգամանքները փոխւած են, նախ՝ հայերի ազգագրութիւնը աղքատ չէ կարելի համարել, և երկրորդ՝ կովկասեան սարերի մէջ շատ այնպիսի խորշեր և բարձունքներ կան, ուր թէ կուլտուրաները և թէ ժողովուրդները փոխանակել են իրար, իրենց ազգեցութիւնը թողնելով երկրի և նրա ազգարնակութեան վրա. օր. Նազրանի լեռնախորշը, Բակսանի հովիտը և Աւրուսբին<sup>1)</sup>:

Հայոց և կովկասեան ժողովուրդների կուլտուրական յարաբերութիւնը շատ վաղ է սկսւած և տեղի է ամբողջ միջին և նոր դարերում: Այդ յարաբերութեան մասին տեղեկութիւնները չեն խմբւած և ստուգւած բանասէրներից. յիշենք զվասւրները.—Տարօնի գուրմիրը աքսորւեցին ու գաղթեցին գետի Կովկ. սարերի բարձունքները, որպէսզի աղատութեամբ պաշտեն իրենց կրօնը (Ագաթ.): Լեռնական ժողովուրդների թագաւորը հայ արշակունիների ազգականն էր (Փաւս. և Տակիտ.): Հայ թագաւորներից ամենաժողովրդականն ը պսակեց լեռնականների թագունու հետ (Խորեն.): Հայաստանի առաջին քրիստոնէական խմբական նահատակները—Սուրբիասեանք—լեռնական ալամներ էին (Յովհ. կաթ. և Յայս.): Ամարասի նահատակը իր միախոներական ձրգութենի զոհն եղաւ վասնեան գաշտում Դ. դարում, իսկ Ե. և Ը. դարերում նոյնպիսի գործիչ էին «Յունան Հոնաց Եպիսկոպոսապետ», որ ի Մազքթաց աշխարհէն էր» և «Իսրայէլ նշանագործ Եպիսկոպոսն Մեծ-Կողմանց, որ զրագում աշխարհն Խաղուց և Հոնաց դարձոյց ի քրիստոնէութիւն (Կաղանկ.): Մխիթար Գօշի գատառանագիրքը մեծ հեղինակութիւն ունէր գրաստանում և ապա նաև Օսետիայում: Զ. դարից սկսած Բագրատունիները տիրում էին Վրաստանում և Օսետիայում: Դաղստանի աւերակներից մէկը ունի հայոց եկեղեցու մասեր—հիւս. պատի մէջ աւազան, սեղանի երկու կող-

մում խորհրդարաններ և սեղանի վարագոյք<sup>1)</sup>: Մենք յիշեցինք գլխաւորները միայն, բայց այդքանից էլ երեւում է, որ հայ-լեռնցոց կուլտուրական յարաբերութիւնը իւր պատմական մասով աւանդութեան մէջ է ամփոփւած, իսկ իւր ժամանակակից դրաւթեամբ անմշակ մի խնդիր է:

Եւ եթէ այսօր մենք յարուցանում ենք այդ յարաբերութեան խնդիրը, այդ էլ մի պատմութիւն ունի, որից հեռու չէ պատահականութիւնը: Շատ տարիներ առաջ, կովկ. ժողովուրդների լեզեի և ազգագրութեան հետ ծանօթանալու կարիքով, հանգիպեցինք ճանապարհորդական նկարագրութիւնների մէջ այնպիսի տերմինների, որոնք նմանահնչեն են հայերէն բառերին, և հաւաքում էինք օրինակներ: Սկզբում յաճախ, ի հարկէ, մնում էինք տարակուսած թէ առեղծւածային չէ արդեօք այն ապշեցուցիչ նոյնութիւնը, որ կրօնական, ընտանեկան և քրէական կեանքի մէջ գոյութիւն ունի թէ Ելբրուսից հիւսիս և թէ Արարատեան դաշտում: Բայց հետզհետէ մեր օրինակները այնպիսի որակ ու քանակ ստացան, որ նորա կորցրին իրենց անակնկալ ընոյթը. մնում էր միայն ընդունել, որ ակնյայտնի կերպով հայ կուլտուրան ազգեր ու կերպարանափոխել է դարերի ընթացքում հիւսիսային գրացիներին:

Այսօր, ահա, հազորդելով մեր գիտողութիւնների մի մասը ընթերցողին, նախ պէտք է բացարկնք, որ մենք գծւաբացանք հայ-կովկասեան յարաբերութիւնը բաժանել ընտանեկան, կրօնական, քրէական, հողային և գիւցազնական մասերի, որպէսզի ամբողջ պատկեր ստացէր մեր աշխատութիւնից: Այդպէս բազմակողմանի վինելուն խանգարում էր թէ հայ ազգագրութեան զեռմանուկ հասակը, թէ հայոց և վրաց միջին դարերի պատմութեան անմշակ գրութիւնը և թէ առհասարակ այն, որ հայ-կովկասեան կուլտուրական յարաբերութեան խնդիրը, ըստ էութեան, մեր, իրեկ մի սոսկ անհատի, նիւ-

1) Հանդ. Ամս. 1895, ապր. 107ր.; Сбор. Свѣд. о Кавказѣ „Изслѣд. обѣ Осетинахъ“ II. 1872, 336; Реслеръ Э.—Арх. изсл. въ Елис. губ. „Весь Кавказъ“ 1903 Тифл., ист. отд. 13—14.

1) Вс. Миллеръ—«Осет. Эт.» т. III, гл. I—III; М. М. Ко-валевскій—«Родовой бытъ»; Վ. Վ. Բաստամեան—Միկիթ. Գօշի զա-տան. Հ.՝ յառաջարանութիւն, ֆարազաշեան, Քնն.պատմ.Հ.՝ Բ. 195, Մ. Եպ. Բարփուղարեան—Աղանից երկիր և զրացիք 1893 Թիֆ. 27:

թական և բարոյական ոյժից վեր զգացինք: Ուստի բաւականացանք մասնաւրով: Որովհետև կովկասի լեռների մէջ ուրոյնացած բազմաթիւ ժողովուրդների մասին միանգամից գժւար էր ընդհանուր եղբակացութեան յանգել այդ պատճառով առանձին մեն մի ժողովուրդի և հայոց կուլտուրական արտայայտութիւնների հարկաւոր կետերը առանձնացրինք ըստ առւլների կամ ցեղակցութեան և ապա իւրաքանչիւր կէտ ստորագրեցինք զուգակշիռների մէջ համեմատական պատկերով: Մեր ընտարած նիւթերը սովորաբար հաստարակւած են, ըստ ծանօթութեան. և միայն քիչ անգամ օգտւել ենք նաև չըհրատարակւած այսպիսի նիւթերից, որոնք վերաբերում են կամ մեր Արէշ գաւառին, կամ Արմաւիրի գաղութին, կամ Ղարաբաղի գիւղերին, ու որոնք զուգակշիռների մէջ առհասարակ երկրորդական պաշտօն ունին:

Ուրուսի գիւղը<sup>1)</sup> թուրքերից է բաղկացած և գտնաւում է Էլլորուսի հիւսիս, Քակսանի ստիին, ծ. մ. 5200 ոտն. բարձր: Դիրքը գժւարամատչելի է, լեռնաշաւիդները անդունդների շրթունքներով են ձգւած, անսարանները զմայելի են: Կովկասի վերջնական գրաւման ժամանակ գիւղացիները հակակրութիւն են ցուցել իշխանութեանը: Հետազոտութեան նպատակով այնտեղ եղել է, ի միջի այլոց, Մ. Մ. Կովալևսկի, որը իր ուսումնասիրութիւնը տպել է „Եպետնիկ Եվրոպա“ ամսագրի 1886 թ. № 1 և 2 «Ս պօջական» վերագրով: Մ. Մ. Ուրուսի է հասել գոյութիւն ունեցող ընդամենք երկու ճանապարհից նըանով, որը աւելի գժւարին է և վտանգաւոր: Այդ ուղին հանքային ջրերից դէպի գիւղը գնացող կարճ, բայց ձորացը մներով ու անդունդներով հարուստ գիծն է: Այդ պատճառով, բացի ազգագրական նիւթերից և հետազոտութիւնից, զբաղեցուցիչ է հեղինակի յօդւածը նաև իւր արկածական բնոյթով: Մեր զուգակշիռների համար նիւթը ընտրել ենք Մ. Մ. յիշեալ յօդւածից:

Գ.Ր. ՏԵՐ-ՊՈՂՈՍԵԱՆ

## ԼԵԹԵԱԿԱՆՔ

ՈՒՐՈՒՍԻՄ

### 1. ԵՐԴՈՒԽՄՆ

Ա. Խաչ իգետնի նկարել եւ կոխել:

«Թուրքերի մէջ ապացոյցի գլխաւոր հիմքը երգումն է համարում, ինչպէս այդ նաև օսերի մէջ է: Ում վրա որ զրւած է ապացուցանելու պարաւորութիւնը, նա գնում է մատուռը կամ թուրքերի հնչիմնով ջուարը» („Ճյարք“): Բացի այս կոնական եղանակից, «Թուրքերին յայտնի է երդման մի ուրիշ աւելի պարզ ձեւ, որպէսզի խուսափեն անշափութեան և հեռաւը «ջուարը» զնալու ծախքերից և վընասից, յաճախ նըանք բաւականանում են երդւելով հէնց զատաստանի տեղն էլ բայց այդ գէպքումն էլ ակնյայնի, թէպէտ և անգիտակցօրէն, արտայայտումն է յիշողութիւնը այնպիսի բոլորովին տարբեր կարգերի մասին, որոնց ժամանակ խաչը կոչւած էր խաղալու ամեն մի քրիստոնեայ ժողովրդի գատաստանի մէջ ընդունւած էական գերը: Թուրքը նոյն վրա ընծան է քաշում, ըջանի մէջ իւր զաւագանի սուր ծայրով երկու գիծ է քաշում խաչաձեւ: կանգնում է ըջանի մէջ անգամ էրկու գիծ հանդիպման կէտում և երգումով խոստանում է զատաւորներին ասելու ճշմարտութիւնը: Նոյն խէկ այն անունը, որով թուրք լեռնցին կչում է այդպիսի երդումը, ցոյց է տալիս նրա քրիստոնէական ծագումը: Թուրքը յիշում է այդ երգումը ոչ այլապէս, քան եթէ խաչով երդումն և անւանում է „կաչ“ (քրետъ):»)

Թէպէտ հեղինակը չէ յիշում, որ կաչ հայոց խաչը պառն է, և փակագծի քրետъ-ով բառի իմաստն է պարզում, խէկ բառի ծագումը մնում է անյայտ, սակայն

1) Մ. Մ. Կովալևսկի — «Ս պօջական» Եպետ. Եվր. 1886 I 108—109.

1) Գրում է նաև Үրսբիև, Үրսբիևսկի այլ:

Գոշ Մխիթարյան յիշում է երդման այդ ձեռք էլ և գործադրութեան պարագաներն էլը իրակ հեթանոսական իմաստ և ծագումն ունեցող, ուրացութեան կարգում։

(ա) Յեկեղեցի մտանելով զլոյս շիջուցանել բ) բերանով իջուր և իձեթ փշել, գ) խաչ իզեանի նկարել և կոփել, դ) զշան զձեռոյ ունել, ե) ոսկը իձեռն ասուով, զ) իգեսնի երկուս ծիրա առնել և իմիոյ իմիւրն մտանել: Այդ ամենայն և այդպիսով ուրացութեան ըրբնակ է, զոր չէ պարտ յանձն առնուլ քրիստոնէլ թէկ մահ հասանէ կամ տան քակումն:<sup>1)</sup>)  
Երդման այդ ձեռքի հսութիւնը և հեթանոսական ծագումը երեւմ է այն հանգամանքից, որ զեռ Բարսեղ կեսարացին մաքառել է, գրելով, որ մոմ հանգցնելը միենոյն է թէ «լինել ընդ խաչահանուն Քրիստոսի»: սակայն այդ և զբա նման արգելքները չեն կարողացել անհետացնել սովորութիւնը. զ-րդ երդումը այսօր էլ կմնդանի է եղիդիների մէջ, զ-րդը մնացել է Թիֆլիսում<sup>2)</sup> զ-զը Ուրուսրիում, Արէշում և Ղարաբաղում, իսկ առաջին ձեր Ղարաբաղի հնագործան գիւղում այս ձեռվ. «Ես գնամ Մբթլղունանց խաչին ճրագ կացնեմ, զու եկ հանգցրու:»<sup>3)</sup> «Խաչ ի գետնի նկարել և կոխել» երդումը, բացի Ուրուսրից, Արէշում և Ղարաբաղի գիւղերում կատարում է այսպէս. երբ մէկը ուզում է հաւատացնել, որ իւր ասածը ճշմարիտ է, խաչ է քաշում զաւազանով զետնի վրայ և զաւազանի ծայրը խփում է խաչի սըրտին. բացի այդ, շատ ընդունւած է ամեն խօսքի ժամանակ հաւատացնելու նպատակով և պատմել և միաժամանակ մատով խաչ զծել գետնին, ցուցական բացական անշութիւն անելով—«ը՞՛ը, կըտեսնես հիմա»:

Պարզ է այս բոլորից որ 1) խաչի երդումը հայկական-ժողովրդական է և 2) որ թուրքերը հայերից միայն կարող էին երդման այնպիսի ձեր և անունը ընդ-

1) Բաստամեան Վ. Գ. «Մխիթարյան Գոշի գատաստանագիրք Հայոց» 1880, նախադր. 51, յառաջար. 163, 173; Հմմա. Խ. Սամուելիների նկատողաթիւնները—Հանդ. Ամս. 1908 Խ. 270—272:

2) Բաստամ. իբիд.

3) «Մարդ աղաւնի խաչ» է կոչում, որովհետեւ եկեղեցու մէջ ապահնած ժողովրդին աղաւնի զարձեցնա, որով և փրկեց նրանց թշնամուց: Ճրագ հանգցնողը առաջ բազնիս էլ է զնում, յետոյ հաղորդում և ժամաշապիկ հագնում ու հանգցնում: Այդ բոլուը տեղեկացնաք ու հաղորդեցնիք Պարբել վարժ. Ղուլիքիսայեանցի խօսքերով, որի համար յախանում ենք մեր չնորհակալութիւնը:

օրինակել: Աւելին ևս կայ. Կովկասի թիւրքերը երկրին քրիստոնեաներին իրենց մի արտայայտութեան մէջ բաժանում են 70 ցեղի, ամենայն հաւանականութեամբ 70 աշակերտների լեզուների համաձայն, և այդ բաժանումը նրանք արտայայտում են կրկին հայերէն «խաչ»-ով—եթմիշ խաչ փարազ միլլաթ—խօսքերի մէջ: Կասկած չը կայ, որ Սեղուկեան թիւրքերը Ասիայի նախադանը հայերից ուսան քրիստոնէական կեանքի մանրամասնութիւնները, և բնական է, որ հայերէն բառով էլ նոքա արտայայտէին իրենց զիտութիւնը. ուստի փոխարէն թիւստու և քրիստոնեայ համաշխարհային անւան, որ զմւարալուր է միւսիւլմանի համար, նրանք հայերէնից ծանօթ խաչը գրած ածեցին, իրը համեմատաբար աւելի տեղական և ուրեմն տանելի բառ. ի հարկէ՝ սա հաւանական մեկնութիւն է, բայց ստոյգը իրողութիւնն է այն պատմական և կուլտուրական ընդհարման և աղջման, որոնց հետեւանքներից մէկը «խաչ փարազ»=քրիստոնեայ և երկրորդը խաչ իզեանի նկարել=«կաչ» (քրեստ) երգումն է, որը հանդիպել է Ուրուսրիի թիւրքերի մէջ Մ. Ա. Կովալևսկի-ին:

Մնում է պատասխանել մի հարցի ևս, որով սպառւած պէտք է համարել ուրուսրիւցոց խաչի երդման ծագման ինդիբը: Առհասարակ աղգաղը ական նիւթերի համեմատութիւնը ինքը զեռ ապացոյց չէ այն բանի, թէ երկու ժողովուրդները միենոյն նիւթը մէկզմէկուց են փոխ առել և եթէ երեայ, որ որևէ չէզոք պայմանի շնորհիւ է միենոյն աղգաղը ական նիւթը հանդէս եկել տարբեր ժողովուրդների մէջ, այն ժամանակ այդ ժողովուրդների կուլտուրական ազգման պէտք է վերապետ պատմական բնոյթ. այդպիսի չէզոք պայման ևն, օրինակ, վաճառականական յարաբերութիւնը և երկարամեայ պատերազմական արշաւանքները, որոնց հետեւանքով էլ աղջում են ժողովուրդները. իսկ ընդհակառակը՝ եթէ երեայ, որ աղգաղը ական նիւթերը մի ժողովուրդ միւսին է հաղորդել անձամբ և անմիջապէս, պատմական կեանքի տեղական մի շրջանում և մայր կուլտուրայի հայերէնիքում, այն ժամանակ կուլտուրական փոխարարձ յարաբերութեան թէ նշանակութիւնը կը փոխի և թէ

ժողովուրդների հոգեկան կեանքի պատկերը կը պարզե՞ս:  
Արդ՝ ինչպէս գոնել թէ, արդեօք, խաչի երդումը հայը  
հաղորդել է ուրուցիկեցոց նախնիքներին անձամբ և  
պատմական Հայաստանում, թէ՝ ընդհակառակն, երդումն  
ինքն է հարաւից հիւսիս տեղափոխել որեւէ չէզոք պայ-  
մանի շնորհիւ։ Բարեբաղաբար այդ հարցը լուծում է  
շատ դիւրութեամբ, շնորհիւ հետեւել հանգամանքի։

Նախ և առաջ, a priori կարելի է ասել, որ սել-  
ջուկեան ցեղը, լինելով քաղաքակրթապէս միապաղաղ  
ժողովուրդ, քրիստոնէական քաղաքակրթութիւնից պէտք  
է ազդէց ոչ թէ իւր այս կամ այն հատւածով, այլ  
ամբողջութեամբ, և ուրեմն չենք կարող տարբեր քա-  
ղաքակրթական նախապատրաստութիւն և տարբեր յա-  
րաբերութիւններ վերագրել այդ ցեղի մեն մի հատւա-  
ծին, իւր արշաւական շարժումի դարաւոր յառաջիստ-  
դացման ընթացքում։ Երկորդ՝ արդարե, խաչի երդումը  
ունին այսօր ոչ միայն էլքրուսի թիւրքը, այլ և Ղա-  
փանի և Գիօրիսի թիւրքերը ևս. առհասարակ՝ Արաքսի  
միջին հոսանքի ոչպարաիկ, թաթարական ժողովուրդ-  
ները գործ են ածում հետեւել դարձածը և երդման  
ձեր, երբ ուզում են իրենց ասածը հաւաստիցնել. նը-  
կարում են մատով գետնի վրա երկու գիծ և ասում են  
— «Երմանըն խաչի օլորն»։

Պարզ է այդ հանգամանքից, որ գեռ ևս այն ժա-  
մանակ, երբ սելջուկեան ցեղը հարաւային կովկասում  
ապրում էր, իրեւ իր արշաւավայրի կայաններից մէ-  
կում, ազգել է անձամբ՝ խաչի կուլտուրան և առհասա-  
րակ կուլտուրան Ասիայում տարածող հայ ժողովուր-  
դից։ Յետոյ նա բաժան-բաժան լինելով, նրա մի մասը  
մնացել է կուլտուրայի մայր հայրենիքում, իսկ միւս  
մասը գաղթել է դէպի էլքրուս, տանելով իր հետ նաև  
կուլտուրական ազգման հետքերը։ Այսպէս ահա, աւելի  
հասկանալի և պայծառ պատկեր է ստանում կովկասեան  
ցեղերից մէկի և հայոց պատմական յարաբերութիւնը և,  
դրա հետեւանքով, «Խաչի երդումը» ստանում է մի ա-  
րեալնեան թելի նշանակութիւն, որոնելու համեմատա-  
տական կէտերը նոյն ժողովուրդների այլեայլ ազգա-  
գրական նիւթերի մէջ ևս։

Չի կարելի անուշագրութեան մատնել նուև այն՝  
խնդրիս համար կարեոր հանգամանքը, որ հայոց պատ-  
մական անցեալում շատ բանի կրօնափոխութիւններ են  
կատարել քրիստոնէութիւնից դէպի մահմէղականու-  
թիւն։ ուստի կարող է ընդունել նոյնիսկ, որ թէ Ռւ-  
բուստինցոյ և թէ Արաքսի թիւրքերի մէջ՝ բռնութեամբ  
կրօնափոխ եղած մի հայկական ցեղից խանութերդ կայ։  
Այդ հաւանական մի ենթագրութիւն է, որ իր կամ ամ-  
բողջ և կամ մասնաւոր իմաստով կարող է ճշմարիտ լի-  
նել։ Սակայն դրանով, յիշեալ ժողովուրդների կուլտու-  
րական յարաբերութեան այն բնոյթը և պատկերը, որ  
յիշեցինք վերեսում, չի փոխել և, ընդհակառակն, ևս ա-  
ռաւել կ'սուուգի։

Բ. Կրօնաւորների երդումը. — „Կայ” երդման  
հարաւից դէպի հիւսիս փոխանցցւիլ պատմական և չէ-  
զոքացած իրողութիւն չէ, այլ ամբողջ գատաստանական  
ոլոցեսի և հասկացողութեան հետ միասին է նա ան-  
ցել մի ժողովովից միւսին։ Այդ ակնյայտնի է դառնում,  
երբ մենք տեսնում ենք զատավարական մանրամաս-  
նութիւնները, որոնք մատնում են սկզբունքների գաղտ-  
նիքը։

Հայոց Մայր-Մաշտոցը<sup>1)</sup> ունի «Վասն երդմնահա-  
րի» մի կանոն, որը կարդում էին հին ժամանակ այն  
մարդու զիմին, ով երդում էր կերել քահանան<sup>2)</sup> աղօ-  
թուում էր—«թողութիւն շնորհեա սմա, որ յանդկնեցաւ  
երդնուլ ընդդէմ ամենասուրը հրամանի քո... թող զյան-  
ցանս երդմնահարութեան սորա»։ Այդ կանոնի ծագումը  
պարզ խնդիր է. քրիստոնէական աշխարհը հեթանոսու-  
թիւնից—անիմիզմի շրջանից ստացաւ երդման զաղա-  
փարը, և երդմնահար խօսքը, ըստ կազմութեան և իմաս-  
տի, այսահար, դիւսահար խօսքերի հոմանիշ է։ Սակայն  
քրիստոնէութիւնը նրան չըկարողացաւ ջնջել. իսպաս  
արգելւեց երդեւ եկեղեցականներին միայն, իսկ աշ-  
խարհականներին «հարկ լուծանէ զօրէնս» սկզբունքով

<sup>1)</sup> Եջ 45ր, ցանկի մէջ չէ նշանակւած։

<sup>2)</sup> Հայոց եկեղեցոց ստորին պատմնահարն էին երդւեց-  
նում և ոչ թէ քահանան. երբ «երդմնեցուցիչը» դատարանի պա-  
հանչը լրացնում էր, յետոյ երդում կերպած մարդը գալիս էր քահա-  
նարի մօտ և նրանից ընդունում թողութիւն իր յանցանքի համար։

թոյլատրւեց: Նոյն արգելքը ունին նաև լեռնցիք. ահա հայոց և լեռնականների արգելքների բառացի համեմատութիւնը<sup>1)</sup>:

Դ Օ Շ

Семеновъ

Կրօնաւոր, քահանայ և Կողկասի լեռնցի մահմէդական-մանողն մի մոցին իդա-ները յանցանք են համարում եր-տաստան, զի մի՛ հարկ լիցի զումը, ինչ պատճառով էլ որ նա երդման: Այս կարգ կացցէ լինի. ուստի և ազատ են երդու- ի վերայ աշխարհական մից մոլլա, զադի, իշխան, տանու- քահանացից: Այլ թէ հարկ տէր, զատաւոր և այն մարդը, որը լիցի գատաստանի, ազգա- ունի հոգեոր իշխանութիւնց վկա- կանը նոցա լցցեն զաեզի յագիր այն մասին, թէ երդեւ է նոցա և ընկալեալ լիցին ի երդէք չը լինել տյօւե-երդմնչի, մէկին արդարացնելու կամ մեղա- դատաւորաց:

Տյօւե տերմինի իմաստին համապատասխանում են երդմնաւոր, երդմնի, բայց սոքա տերմին չեն, այլ բաղկացեալ բառեր: Տուգանել բայց նշանակում է բըռ- նութեամբ ի հատուցումն հարկադրել մէկին, դատարա- նական այդ գաղափարը թէ ինչ սերտ առնչութիւն ունի երդման հետ՝ պարզ է. սկզբնական շրջաններում, ինչ- պէս կըտեսնենք հետեւալ զուգակշռից, վկայութիւնը խոտելի միջոց էր ճշմարտութիւնը կամ տուգանքը որո- շելու համար. պէտք է ուրեմն երդէին: Տուգանքին հա- յերէն լեզւի ձայնական յատկութեամբ, հոմանիշ է տու- ժեմ և տուժիմ: Տուգանքի և տոյժի մասին Արքայի բառգիրքը տուգանք խօսքի տակ զրում է—«Մերթ տու- գանքը կոչին անխտիր ամենայն վասք, զորս և անուշ- նեմք տոյժս. ուստի և երբեմն ի միասին ի զործ ա- ծին իրն զնոյնանշան. ըստ այսմ օրինակի. տոյժք տուգանաց կամ տուգանս տուժից:» Իմաստի զարգաց- մամբ տուժել բայց այժմ ունի, զատարանից անկախ, ամեն հատուցման գաղափար, մինչդեռ տուգանքը ան- միջապէս զատարանական տերմին է: Թէ այդ բոլորը և թէ լեռնականների զատարանական սովորութիւնը ար- դարանում են տուժել արմատի նմանահնչիւն

1) Գօշի դատաստ. Բ. 45—59, 56, Семеновъ Н., „Очерки народныхъ обычаевъ кумыковъ“, Сборникъ Г. Терской Области 1892, кн. II, отд. II, 91.

ձերով: Եթէ լնոգունենք որ «տուգանք տուժից» ամե- նից մօտ է կանգնած ճշմարտութեան, քան տուգանքիմ և տուժիմ բայերի արդի իմաստը, կըտեսնենք, որ ար- մատի միենոյն այդ բաղադրեալ ձեր մատնանշում է թէ տուգանքը տուժից է հետեւում. ինչպէս և եղել է միշտ և է նաև լեռնցոց մէջ, այսինքն տյօւե-ից էր հետեւում տուգանքը և նրա չափը: Այն էլ կայ, որ Գ լծորդը յետնա- գոյն է քան բոլոր հազարայինները. ինչպէս չու, լուանալ, առու, արուեստ առ չոգ, լոգ, առողանել արգաւանդ ձերը<sup>1)</sup>). Այսպէս նաև տուժել նախագոյն է քան տու- գանել: Սովորական է նաև որ ժ, զ, ս և ձ ձայները լեռնցոց յատուկ խեցբեկ արտաբերութեամբ վոխանակ- ւած են մէկզմէկու, ինչպէս ներկայ դէպքում տուժ—տուս: Բնական է, որ երգման պրօցեսի մանրամասնութիւնները և տերմինները մոռացւէին քրիստոնէական հալածանքի տակ և զեռ ևս գոն պիտի լինենք, որ լեռնցոց տյօւե և հայոց տոյժ իրբեկ հնութեան մնացորդներ մէկզմէկու իմաստ են տալիս և ժողովուրդների քաղաքակրթութեան ինպիրը պարզում:

Գ. Երդումը գերազանցում է վկայից.—Երգման գործադրութիւնը նոյնպէս զուգակցուում է. ըստ Գօշի, երդւել կարելի է նախ և առաջ երբ վկաներ չկան:

«Հատարակապէս յամենայն իրս զատաստանի, որոյ վկայ կայցէ, մի՛ լիցի երդումն. իսկ որոյ վկայ ոչ կայցէ, հարկ է երգումն». «Եւ որոյ վկայ ոչ կայցէ, երդմամբ միւսի կողմանն հատցի գիրն<sup>2)</sup>: Ուրուսրիկոց մօտ. „Если свидѣ- телей сдѣлки нѣтъ болѣе въ живыхъ, ихъ показаніе въ этомъ случаѣ замѣняется присягой отвѣтчика“<sup>3)</sup>.

Առանձին ուշագրութիւն է զրաւում վկաների գերը երկու երկիրներում ևս: Հայոց մէջ երդումը ծայրայեղ գործածութիւն ունէր, իսկ վկաների ցուցումը երկրոր- դական էր համարում: Պատժական և արգելական օրէնքը միշտ ժխտում է այն ամենը, ինչ որ կեանքի մէջ զո- յութիւն ունէր. ուստի երբ Գօշը թոյլ է տալիս երդւել միայն այն ժամանակ, երբ վկաներ չկան, երբ կողմերը ուրիշ կերպ չեն հաշտուում, և երբ զատաւորն է պահան-

1) Հանդ. Ամս. 1907 IX 280, 1909 I. 24.

2) Պատաստանագիրք Հայոց նախ. Բ. 49—59, 53, 29.

3) Եւստ. Եվր. 1886, I. 109.

ջում—այդ նշանակում է, որ նրա դարում երգւում էին վկայ եղած ժամանակ էլ և այլապէս կատարող դաշտարանական պրօցեսը յարգի չէր, յարգի էր միայն երգումը, անա վերաբերութեամբ միենոյն խնդրին, Աւրուարի գիւղի սովորութիւնը նոյնն է. Երկար համեմատութիւնից յևոյ Մ. М. Կովալևսկի գրում է.

Все это какъ нельзя убѣждаетъ въ томъ, что древнѣйшему процессу горцевъ, свидѣтельское показаніе, какъ самостоятельный видъ доказательства, отличный отъ присяги родственниковъ, вовсе не было извѣстно<sup>1)</sup>.

**Գ. Կայզ Տոհմի երգումը.**—М. М. Կովալևскій իր գասախօսութիւնների և „Родовой бытъ“ աշխատութեան մէջ համեմատական քայլով ցուցել է, որ Մորգանից հաստատած «մայրական» կարգերը գեռ գոյութիւն ունին օսերի մէջ. Աւրուարիկցիք յետ չեն մնում նրանցից. մինչդեռ օսերի մէջ քրիստոնէական կամ որեէ ուրիշ ազգեցութեամբ ջնջւած է օսերի սովորութիւնը պահանջնելու, որ երգումը ուտի պատասխանատու անձի մօր տոհմը, ընդհակառակն ուրուսրիկցոց սովորութեամբ առաջին տեղն է բռնում մօր ճիւղագրութիւնը.

„Кого изъ числа родственниковъ ставятъ татары на первомъ планѣ, кому поручаютъ они подкрепить свое показаніе присягой заинтересованной стороны—не родственникамъ по отцу и вообще не родственникамъ по мужской линіи—а дядѣ по матери и за нимъ племяннику въ женскомъ колѣнѣ, сыну сестры“<sup>2)</sup>,

Հայոց գատաստանագիրքն էլ չի պահել այդ խըտութիւնը. բայց մեզ թւում է թէ հայերից օտար չէ եղած այն, ինչ որ Աւրուարիկցոց մէջ այժմ սովորական է, և Թօշը պահել է յիշատակւած խարութեան մի հետքը. բոլոր երգւելու իրաւունքից զուրկ մարդիկ—ծերունիներ, հիւանդներ, մաքսաւրներ, ապաշխարուներ և նոյն իրաւունքից զուրկ կանայք—պառաւներ, հիւանդներ, ապաշխարուներ—իրենց փոխարէն, հարկը պահանջած գէպօւմ, պարտաւոր են երգւող ցոյց տալ, միայն մի պայմանով. այդպիսի մարդիկ պէտք է ցոյց տան կամ իրենց հօրը, կամ եղրօրը և կամ իրենց որդոց, իսկ կա-

նայք չեն կարող ցոյց տալ իրենց մարդուն, որդուն, աղջկանը, փեսային, սկեսարային և առնասարակ իր մարդու տոհմից մէկին. այլ այդպիսի կանանց փոխարէն կարող են երգւել «մայր և քոյր կամ եղբայր, կամ այլ սիրելի կամ մերձաւորք, նոքա երգիցն և զմիմեանց բեռն բարձրեն»: Տարբեր շաղով այս խարութիւնը կրկին մայրական կարգն է ակնարկում: Պէտք է յիշենք, որ Արէշում գողի հօրը երգւեցնել անկանոն չէ. բայց մօր եղրօրը—խստութիւն է, իսկ մօրը հօրը—համարենայ յանցանք:

## 2. ԿԱՅՈՒԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Փօշ, առնելով Թաղէսս առաքեալին վերագրած կանոններից 31-րդ յօդ, գրում է.

«Հարցումն, որ միոյ մօր կաթամբ սնեալ իցեն օտարք իմիմեանց, յորդամ իշափ հասանեն արժան է ամուսնանալ: Պատասխանի. Զէ պարտ արժան. քանզի ծնողն և ստուն ընդ մի համար են»:<sup>1)</sup>

Այսեղ խօսքը մի զոյգի մասին է, տղայի և աղջկայ. մինչդեռ Արէշում և առնասարակ մեր գաւառներում ոչ միայն մի զոյգը, այլ կնքահայրերը մէկզմէկունչ աղջիկ են տալիս և ոչ էլ առնում են. կնքահայրերը մեր նախնեաց դայեակների ու ստուների յետին մնացորդն են. Արէշում կնքահայրութիւնը կոչում է որդեգիր բառով—օրդագիրութիւն: Նոյնը նաև լեռնցոց մէջ է, որոնք աւելի հին իմաստ և նշանակութիւն են տալիս ստունում և շատ կէտերով համեմատում են մեր նախնեաց հետ.

„Молочное родство, порождаемое фактомъ вскармливания ребенка грудью, также соблюдается татарами весьма строго. Между родомъ кормилицы и родомъ вскормленного ею не можетъ быть брака“<sup>2)</sup>. Աւրուարիկցին առնում է. „Молоко такъ далеко идетъ, какъ кровъ“.

Մեր ժողովուրդը այդ չունի, բայց ժօտաւորապէս նոյն իմաստը բովանդակում է հայկական առածը—«Կաթի հետ մտածը հոգու հետ զուրս կըգայ»<sup>3)</sup> որի մէջ կաթի ազգեցութեան մասին է խօսքը:

<sup>1)</sup> Դատաստանագիրը Ա. 193.

<sup>2)</sup> Ենցուն. Եպ. 1886 II. 568 և IX. 34.

<sup>3)</sup> Էմին. աղջ. ժող. Ա. 109: «Թիֆլիսկեց, մտաւոր կեանքը» Գ. Տէր-Աղէք. 1885, Թիֆլ. 120.

<sup>1)</sup> Ենցուն. Եպ. 1886 I. 108.

<sup>2)</sup> Ibid., 108.

Կաթնեղրայրութեան վերաբերեալ օրէնսդրութիւնը, որի համեմատութիւնը տեսանք արդէն, խորին հնութիւնից է ծագում. բայց մենք կանգ չենք առնիլ այստեղ այդ խնդրի վրա, ուրիշ պատեհ ասիթ ունենալով զրա համար. կըյշենք միայն երկու ժողովուրդների անդիր վիպասանութեան գրի առած հատւածների բառացի համեմատութիւնը՝ վերաբերեալ կաթնեղրայրութեան։ Մայրական շրջանից յետոյ, հայրական շրջանի սկզբում ստեղծեց հրէշային կամ ճիւազային մօր առասպելական պատկերը<sup>1)</sup>, այնուհետեւ երկար ժամանակ գոյութիւն ունեին որդեգրութեան այնպիսի ձևեր, որնք մօր ստինքի շնորհիւ էին սրբագործում. վրէժինդրութիւնից փրկւել կարելի էր նոյնպէս ստինքի շնորհիւ։ Հետեւալ համեմատութեան մէջ, հրէշային պառաներից փրկւելու համար, նրա կաթով որդեգրում են հայ և լեռնցի հերոսները, կաթնեղրայր են դառնում պառաների հրէշային աղջիկներին և, մայրատիրական ամենասկզբնական կարգերի համաձայն, առնում են իրենց կաթնքրով.

Դաւիթ և Մհեր<sup>2)</sup>

Գնաց տեսաւ մէկ տեղաց  
մուխ ըմ կ'ենի:  
Յերի տակ էր. գնաց էն  
յէրի տակ:  
Տեսաւ մէկ պատու նատի,  
լիաց կը թիֆ.  
Եծեր թալիբար թէքերուն,  
Եծեր ինչւ շան լակու յի-  
լրաց կանոնն:  
Մհեր վախացւ, տաց.  
Թը գեազիկ թիւմ, էնու  
ձեր բոնեմ,  
Տելի կեօւ, ընկնի մըշ իմ  
սրտին.  
Թաշքեարայ անեմ, վախե-  
նամ էնի ձի յազթի:

Շայա!<sup>3)</sup>

Глазамъ Алаугана представилась громадной величины женщина „Эмегена“ съ откнутыми назадъ чрезъ плечо персями: она зачиняла трещины земли, при помощи иглы, которая была величиной съ хорошее бревно, а нитка—какъ арканъ. При видѣ такой громадины, Алауганъ совершенно оробѣль и не зналъ, на что рѣшился. „Если пуститься бѣжать, разсуждалъ онъ, то Эмегена догонить и, навѣроно, съѣстъ; а не бѣжать и подойти къ ней—страшно“. Думалъ, думалъ и, наконецъ, рѣшился онъ поти-

<sup>1)</sup> Липпертъ, Исторія Семьи 1897 СПБ, 57...

<sup>2)</sup> Մ. Աբեղեան, Եռւշ 1889, 55—6.

<sup>3)</sup> С. Урусбіевъ—„Сказанія о нартскихъ богатыряхъ“, Сбор. матер. для опис. мѣст. и плем. Кавказа, вып. I. отд. II. 8—9 1881, Тифлісъ.

թամկի տեխէն գեազիկ խոնку подойти къ ней сзади и  
թւեց, тотчасъ взять ея перси себѣ въ  
Պառաւ ձձեր բռնեց, քա-  
մեց. Արուն, արնձիւ էկաւ տիւն  
ձձերաց։ Պառաւ ստաց.—Ա՛խ, ես յի-  
մացիր էր՝ Դաւիթ սպանիր  
են, էս Դաւիթի տարմի տար-  
բելն ի ձի խանաւ։ —Ա-  
ստաց.—Իմձձեր թնւղ տուր,  
մէկ աղջիկ ունիմ, անուն  
Գոհար խաթուն, եօթ տարի  
էլաւ։ Հալարայ թազաւոր  
թիր վրայ ի չմ ի տայ է-  
նոր. թնւղ տուր, իմ աղ-  
ջիկ տամ քե։ Մհեր թուղ  
ետու։

—„Ախъ, какъ это кстати! я тоже вышла изъ дома какъ разъ для того, чтобы найти жениха для своей единственной прекрасной дочери, вотъ, право, какое счастливое совпаденіе! Пойдемъ къ ней: увидѣвъ ее, ты, конечно, полюбишь ее!“

Այս համեմատութիւնից երեսում է, որ մայրական շրջանի կարգերի համաձայն, և հակառակ Մխիթարի կանոնի և Աւրուարիկնցոց ստորութեան, կաթնեղրայրութիւնը ամենահին ժամանակները ուրիշ նպատակ և նշանակութիւն ևս ունեցել է։ Մհեր և Ալառվան առնում են իրենց կաթնքրոջ որդեգրւելով կաթնեղրայրութեան կարգով։ Խոկ թէ՛ինչու թշնամի էին հերոսները պառաներին, և առհասարակ թէ ինչ միաք ունին վէպերը այդ կէտում—այդ հարցերը մենք թողնում ենք։

### 3. ՀԱՐՍԱՆԻՔ

«Ա. Բարձ վիոխել»։ —Մի ուրիշ զուգագիպութիւն կրկն մեզ փոխագրում է ամուսնական խնդրի զարգացման այն շրջանը, երբ հայրական կարգերի ոյժով աղջիկը պէտք է բռնի կերպով՝ բաժանէր իր մօր

<sup>1)</sup> «Զիկրող ոչ զիտես, եթէ զոր ոչն է ծնեալ, ոչ է ժառանգ, և զոր ոչն է գնեալ, կամ աւարեալ, ոչ է ծառայ», Գր. Մազին. Թղթերը, Աղեքս. 1910, 232.

տոհմից, որպէսզի փեսայի սեպհականութիւնը դառնար. Երբ ամուսնութեան զարգացման պերիպետիաներից մէկը աղջիկ փախցնելու սովորութիւնն էր: Բայց հարց էր թէ ուր տանել աղջկան. փեսայի տունը չէր կարելի տանել, քանի որ, որոշ զաղափարի ազդմամբ, փեսայի տոհմը համարում էր նորահարսին տոհմական և համայնական սեպհականութիւն և փեսան, ըստ հերթի, ամենից վերջն էր ստանում իր կնոջ հետ յարարերութիւն սկսելու իրաւունք: Աղջկայ մօր տունը ինքնըստինքեան չէր կարելի, որովհետեւ, հայրական կարգերի ոյժով, փեսան, իրը գողացւած աղջկայ սեպհականատէրը, ստիպւած չէր իր զորանջի տանը ապրել՝ իրը հիւր և ծառայել՝ իրը ստորագրեալ): Իհարկէ՝ քաղաքակրթական ընթացքը ուղիղ գծով չէ միշտ շարժւել և հին սովորութիւնների հետքերը մինչև այսօր էլ նկատելի են ժողովրդական կեանքում. սակայն միանգամ արդէն հասունացած զաղափարն էլ չէր կանգ առնում և ստեղծում էր տրագիցիայից և հսկց պաշտպանւելու պատճէններ: Որպէսզի փեսան, աղջիկ փախցնելով, կարողանար իւր անխառն և անրիծ ժառանգը յարուցանել նախնեաց պաշտամունքի համար և ազատ մնար նրա ընտանեկան ինտիմ կեանքը և տոհմի, և քրմի, և նահապետի ու կալածատիրոջ առաջին գիշերւայ իրաւունքից (jus pri-mae noctis<sup>2)</sup>), փեսան իր հարսի հետ առաջին ամուսնական օրից սկսած փոխազրում էր մի երրորդ, օտար, միջնորդ տարրի տունը և այստեղ էր ապրում մի քանի ամիս շարունակ: Որուսրիկցիք ունին այդ սովորութեան վերջին մասը.

„Первое время послѣ свадьбы мужъ можетъ жить съ молодою не иначе, какъ въ чужомъ домѣ, домѣ пріятеля, который отнынѣ становится для него лицомъ столь же близкимъ, какъ и аталаикъ, или воспитатель, и получаетъ название „балушъ“<sup>3)</sup>.

Այսու ամենայնիւ տոհմի իրաւունքը աղջկայ վրա

<sup>1)</sup> Սկզբում նահապետական տան մէջ այդ կարգը ընդունելի էր իրրի միջոց կին առնելու կամ գնելու. օր. Յակովը նահապետի 14 տարւայ կեանքը Խոսանում կայի և Մաքէլի համար:

<sup>2)</sup> Ю. Липпертъ—«Исторія Сем'и», СПБ. 1897, 140—141.

<sup>3)</sup> М. М. Ковалевскій „У подошвы Эльборуса“ 1886, II, 565—566.

չըկորաւ իսպառ. Ուրուսրիում հարսի և տղայի ծանօթ երիտասարդները խանգարում են նորապսակներին. Նրանք հաւաքըւում են «բալուշի» տան կտուրը, և ծինելայզից քար, սպանւած թոշուն, ընտանի կենդանիներ, իրենց գտակները և շատ այդպիսի իրեր են ձգում ներս, հրացան են պարզում, ազմուկ ու անկարգութիւններ են անում: Սոքա բոլորը հնապատմական հետքեր են երբեմնական սովորութեան, առաջին գիշերի իրաւունքի, որը ուժեղ գործադրութիւն ունէր հնում, և որից ազատւելու. համար պէտք եղաւ „բալուշ“-ի սովորութիւնը ստեղծել. բալուշ նշանակում է բարձ: Փեսան և հարսը իրենց ամուսնական բարձերը փոխարինում էին մի երրորդ մարդու, միջնորդի բարձով:

Հայերը չունին ոչ ինքը բալուշի սովորութիւնը և ոչ էլ նրա հետքն անգամ պահնւած է արարողութիւնների մէջ. մինչզեռ թէ առաջին գիշերի իրաւունքի, և թէ առհասարակ ամուսնական հին ձեերի հետքերը խիստ գունաւոր գծերով կարելի է նկատել գեղջուկ հարսանիքների ժամանակ<sup>1)</sup>: Միայն բալուշի հետքերի իսպառ ջնջւիլը, երեխ, որևէ զօրեղ պատճառ է ունեցել. որովհետեւ ամբողջ ամուսնական սովորութիւնից միայն բալուշի բացակայութիւնը թէպէտ անհնարին չէ մտածել բայց անհաւանական չէ մտածել նաև, որ նա գոյութիւն է ունեցել որոշ և ցայժմ իսկ իւր հետքերով յայտնի պատճառների հետեանքով: Եւ արդարեւ, բալուշից հայերը պահել են մի սասցւած, որը անմիտ մեկնութիւն է ստացել այժմ և որը միայն Տայլորի եղանակով<sup>2)</sup> պէտք է մեկնել, իրք ըուղիմնեն. «Բարձը թող փոխի, երեխայ կունենայ:» Իմաստի զարգացմամբ այս զարձւածը գործ է ածւում ամեն ամուլ կնոջ համար և հեգնութիւն կայ նրա գործածութեան մէջ անհաւատարմութեան վերաբերեալ:

Բ. Քաջընկեր.—Ուրուսրիկցոց հարսանեկան արողութեան մէջ պահնւած է, նման կաշ—խաչ տերմինի, մի հայերէն բառ. փեսայի հետ արշաւախումը կազմող

<sup>2)</sup> Հմմտ. նիւթեր են Շահապիվանի ժողովի կանոնները, Ազգ. Հանդէսի մէջ հասանեաց նկարպիրները և Գօշի զատաստանագրքի համապատասխանող յօւածները (տես ստորև):

<sup>3)</sup> Тайлоръ-Первобыт. культура, 1872 СПБ. I 234...

և հերոսին մասնակցող երիտասարդները Ռւբուսիում կոչում են հայերէն բառով և արտարերութեամբ «քաջ-ընկեր»։

„Въ свою очередь, поэзжане, или „кіедженгеры“, посылаемые женихомъ за невѣстой, приготовляются къ поѣздкѣ точно къ бою.“<sup>1)</sup>

«Քաջընկեր» տերմին չունին հայերը, մակար, աշգաղ բառերն էլ օտար են և յայտնի չէ թէ հին հայերը ինչ տերմին են ունեցել։ Այդ առիթով աւելորդ չէ նկատել, որ բոլոր ազգերը, որոնց հարսանեկան արարողութիւնները հետաքրքիր են նիւթիս համար, համապատասխանող տերմինի փոխարէն նկարագրական բառեր են գործ ածել։ Ծահապիվանի կոչումն է սուս փեսայ, նրա ընկերները—օգնականք, իսկ արշաւանքը—հրուս։ Կանոնը և նրան կցւած մի խրատը գտնւում են Գօշի դատաստանագրքի մէջ—Ա. Ղ. 199—200.

«Եւ որք հրոս երթեալ իցեն և օգնականք սուս փեսային, առ այլն հարիւր դրամ տուգան տացեն և զիրոսին դրամն գլէմն յեկեղեցին տացեն և գլէմն կարօտելոց»։

Ֆրանսիական հարսանեկան աւազակախմբի (շայլա) անդամները, որոնք նոյնպիսի տուգանքների ենթարկեցին օրէնքով, կոչում էին «օգնականներ», «բաժակակիցներ» և «զինուորներ»։ Սերբ-սլաւոնները կոչում էին „գոսподинներ“<sup>1)</sup>։ Այս բոլոր գէպերերում միենայն իրի տարրեր անուններն են, յատուկ տերմինից զուրկ, նկարագրական բառերով համարսանում։ Հին Կտակարանն էլ մի նկարագրութիւն ունի փեսայի օգնականների վերաբերեալ որտեղ ահա քաջ նիզակակից են կոչւած շքախմբի անդամները։ «Երգ երգոցի» մէջ թարգմանիչները, հանդիպելով Սոլոմոնի գահոյքի նկարագրին, գրում են նախի հարսի և ալս փեսայի շքախմբի մասին։

Մի է ազանի իմ, կատարեալ իմ, մի մօր իւրոյ ընտրեալ ծնողի իւրոյ, վաթսուն են թագուհիք և ութսուն հարդք և օրիորդք, որոց ոչ զոյ թիւ Անա գահուք Սոլոմոնի. վաթսուն սպառազէնք շուրջ զնովաւ իքաջացն իսրայէլի. ամեններեան սուսերաւորք հմաւոք պատերազմի... ելէք հայեցարոք գտաերը Միմսի յարբայ Սոլոմոն իսպահն որով պատկեաց զնամ մայր իր յաւոր փեսայութեան իրոյ<sup>2)</sup>։

1) Вѣст. Евр. II. 1886, 566. „У подошвы Эльборуса“ М. М. К.

2) Липпертъ Ю. Исторія Семьи 1897 СПБ. 124.

2) Երգ երգոց Զ. 7—10.

Թէ ինչպէս և ինչու Ռւբուսիում պէտք է հանգստս գան հայկական սովորութիւններն և խօսակցական բառերը—մենք վերջում կըպարզենք, նկատենք այստեղ միայն այսքանը, որ մեր առաջ հանդիսանում է շատ ընական մի երեսյթ. կուլտուրական ազգերը ազդում են յետամնաց ժողովուրդների վրա, և իրենք առաջ են գընում ու դարերի ընթացքում նոյնիսկ մոռանում են իրենց հին կեանքը, միշտ նորոգւելով. մինչդեռ ազդուող ժողովուրդները, շնորհիւ իրենց պահպանողական հաստատ անշարժութեան, պահում են հնութեան մուրացածոյ քաղաքակրթական փշուրները, նոյնիսկ անհասկանալի բովանդակութեամբ և մակդիր գարձած տերմիններով։

#### 4. ՄԱՍՆԱԿՈՐ ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. Հողի անձեռնմինշիուրին։—Համայնական սկզբունքներից էր բարում հողի անձեռնմինշիուրիւնը Ռւբուսիում ընտանեկան համայնքի գլուխը շատ կէտերով նմանում է հողմէական pater famas-ին. բայց շատ կէտերով էլ տարբերում է նրանից. օրինակ նա իւրաւունք չունի ընտանիքից անդամ հրաժարեցնել և ընտանիքի կայքը և եկամուտը ծախել ու փոխառութիւն անել։ Այդ երկու հարցերը վճռում են ընտանեկան խորհրդի բոլոր անդամների համաձայնութեամբ, իսկ եթէ գէթ մի բողոքող գտնւեց, համաձայնութիւնը կը քանդիւ։ Ընտանեկան խորհրդի օրինական համաձայնութեամբ վաճառւած համայնական կայքը զնողի յաւիտենական սեպհականութիւնը կազմել չի կարող. որովհետեւ ընտանիքից մէկ անդամ, երբ որ կամենայ, իւրաւունք ունի, վճարւած զինը վերագարձնելով զնողին, կայքը նրա իրաւունքից հանել և վերստին իր ընտանիքի կամ համայնքի սեպհականութիւն գարձնել։ Ամբողջ առւների մէջ նոյնպիսի կարգով ահա պահպանում է համայնական հողի անկորուստ մնալու սկզբունքը։ Ահա այդ մասին հայոց կանոնագրքի յօւածները, նրանց մէջ նկատելի է մի տրամադրութիւն վերոյիշեալ սկզբունքը խախտելու կամ մեղմացնելու։

«Եթէ վասն աղքատութեան իկալուածոյ վաճառէ, և դիցին փրկանոթը յազգատառնմէ իւրմէ մինչև յեւթն ամ ըստ օրինացն (Բ. Օրինաց ժե. 2), իսկ եթէ ոչ կարիցէ փրկել յեւթն ամս անտի յառաջ, հաստատիցի վաճառն»:

Քաղաքում պարապաւոր տունը վաճառելուց յետոյ «փրկման» ժամանակը մի տարի էր. ջրաղացինը նոյնպէս: Միամեայ փրկանքով վաճառները կատարւում էին «յաղագս աղքատութեան», ուստի նոյնիսկ համարւում էր «վասն ողորմութեան դարձուցանելի<sup>1)</sup>»:

Բ. Տօկոս, հոդի արդիւնի կէսը.—Ուրուսրիում Հողի արդիւնքի կէսը պարտատիրոջն է մինչև այն ժամանակ, երբ պարտքը չէ շիջուցւած: Պայմանի սրբութեան համար, տալիս են անձնական երաշխաւորութիւն և կայքի վարձ (поручительство, залогъ съ характеромъ имуществоенного найма), ուստի պարտատէրը տօկոս չի ստանում, այլ օգտուում է կայքի նկամտից մինչև պարտքի հատուցումը<sup>2)</sup>: Նոյն է նաև Բուլանցցոց մէջ:

Գիւղացին կ'ստանայ մի որոշ գումար և սերմացու ցորեն դրամատէրից, իր անսանոց հետ միասին կատարած 4—5 ամսւայ գառն քիրան աշխատութիւնից յետով, կալոցի ժամանակ, դրամատէրը սերմը մէջ տեղից կըփերնէ, ապա մնացածը կէս առ կէս կըրածնւի պարտատիրոջ և պարտապանի վրա. իսկ դրամատէրից կըմնալ դարձեալ պարտք<sup>3)</sup>):

Գ. Տօկոս, կենդանիների աձման կէսը.—Անսանունի պարտքը Ուրուսրիում տարբեր վարձատրութեան չափ ունէր. փողի գործածութեան օրով մի կովը գնահատում էր 10 ր., իսկ հորթը հաւասար էր կովի մի հօթներորդ մասի (1 ր. 42 կ.): Մի կովը առաջին տարում պարտատիրոջ համար բերում էր հորթի գինը և կովի պանիրն ու կաթը. երկրորդ տարին դրա վրա աւելանում էր նաև առաջին հորթի, իբրև մի տարեկան կովի, հորթի գինը, իսկ բուն պարտքը, մայր կովը, մնում էր դեռ պարտք: Այդպիսի տօկոսի մասին Գօշը չէ յիշում, բացի մի առիթից, որից երկում է թէ հայոց մէջ կենդանիների տօկոսը աւելի բարեխիղճ հողի վրա էր դրւած քան Ուրուսրիում այն ժամանակ,

1) Դատաստանագիրք Բ. ԾԲ, ԾԳ, ԾԴ, ձէ են էջ 363—6, 416.

2) Եւետի. Եպոպի 1886 II 560—561, IX, 41.

3) Աղջ. Հանդէս, «Բուլանցը» 1899, թ. 51.

երբ ժողովւած են մեզ հիմք ծառայող ժողովրդագրական նիւթերը.

Ըսդհանրապէս կնոջ օժիտը և կայքը անձեռնմխելի էր թէ՝ կովկասի լեռնցոց և թէ՝ հայերի մէջ: Հարսը երբ մեռնում էր, նրա օժիտը և երեսաց տեսոյ գումարները որոշ նշանակութիւն են ստանում: անժառանգ հարսի մահից յետոյ, նրա հօր տնից փեսայի տունը բերւած «կենդանիք կամ անած և անմահ համարեսցին, և կամ թէ աճեալ իցէ և ոչ պակասեալ՝ զգլուխն առցէ ծնողն հարսին և զիէս աճին, և կէս աճին առնն լիցի<sup>1)</sup>): Ուրիմն կնոջ կայքը մարդու ձեռքին մի ցպահանջ զումար էր համարւում. կենդանիների աճման կէսը, իվարձարութիւն, ստանում էր մարդը, իսկ բուն կայքը և մայր անսառնը և անսառների աճման կէսը վերադարձնում էին կնոջ ծնողներին: Ուրուսրիցոց հողային սերմատու պարտքի կանոնն է այդ. երկու գէպքում էլ արդիւնքի կէսը տօկոսի բնոյթ էր կրում, և պատկանում էր նըրան, որին պատկանում էր նաև բուն դրամագլուխը կամ կայքը: Տարբեր է սակայն աճման կէսի տօկոսը Ուրուսրիի կովի պարտքից, որի հետքը և նմանը մեզ չըաջողւեց գտնել հայոց մէջ: Դրա փոխարէն, հաստատ կարող ենք առել, որ այդ բոլոր տեսակ պարտքերի հիմքում միատեսակ գաղափարի սաղմն է թագնւած: Թէ հայը և թէ ուրուսրիկցին իլենց ամեն տեսակ պարտքերն ու տօկոսները միատեսակ իրաւական ծագումից են ստեղծել, միատեսակ արտայայտութիւններով: Նախ ուրուսրիկցին թէ օժիտը և կալմը, որ ստանում է աղջկը իւր թիւրք հօրից, և թէ՝ պայմանագրութեամբ հողից օգտակրու համար եղած զիջումը կամ բնծայաբերութիւնը—երկուսն էլ միենոյն տերմինով է ասում: Ուրուսրիում նրեն նշանակում է օժիտ (որի դանօւ), իսկ նիրո կամ ներ նշանակում է պայմանագրութեամբ որևէ ընծայաբերութիւն, իբրև պարտքի տօկոս:

Բուլանցցին կոչում է մերի կամ մերիբայութիւն (կապարով և շահով հող մշակել) տօկոսն ու տօկոսային գործառնութիւնը: Թէ ներ և թէ մերի տերմինները

1) Դատաստանագիրք Ա. 291, ԺԱ, կ. 102.



ծագում են արար, մահը, կամ մէհը արմատից, որ միջին դարերում հայոց մէջ նշանակում էր զին անձին, կաթնագին, կնոջ ստացած ընծան, ինչպէս այդ երկում է հայոց դատաստանագրքի յօդւածից Ա. ՃիԱ. 289.

«Ալլապէս լինի առ մահմէտականուն զուգումն ամուսնութեան, զի հատանեն նախ զին անձին կնոջն, որ կոչվ մահը... Եւ իսկրել առն ամուսնութեամբ անձին կնոջն՝ յայնմէետէ մահին անդառնալի կնոջն մնայ։»

Հայոց տէրմինները—տուայր և պոյզ—այժմ գործածական չեն. զաւառներում յայտնի են նադդ, բաշլը, երեսացտես<sup>1)</sup>, խալաթ բառերը, որոնք նոր և օտարամուտ են. այդպէս է նաև Արէշի և Ղարաբաղի «բարգահ» կապելը. նշանակում է աղջկայ ստացած ընծաներից մէկը. Իսկ Արարատեան դաշտում «բահրա» կոչում է հոդի կապալագինը կամ փողով կամ արդիւնքով։

## 5. ՀՈԳԵՀԱՅ

Հոգեհացի սովորութիւնը, նախնեաց պաշտամունքի հնաւանդ մնացորդը լինելով, չափազանցութեան է հասած լիոնցոց մէջ։ Ամեն մի մեռեհաց 400—2000 ըուրի էր նստում և ամեն մի ննջեցեալի համար երեք պարտաւորեցուցիչ հացկերոյթ էր լիոնում, ամեն մէկը 10—17 եղ և 95—168 ոչխար մսացուներով, այլև համապատասխան քանակութեամբ օդի ու զարեջուր էր ծախսում։ Առանձին շուք էր ստանում նսում տարելիցի հացը, որ կատարում էր ամրող հասարակութեան, այն է մի քանի առւների մասնակցութեամբ բոլոր մեռեալների համար մարտի կէսերին. տեսում էր մի քանի օր, և ամեն անգամ հացից յետոյ խաղեր, մրցութիւններ և ձիարշաւներ էին կատարում։ Ռումները ոս գնդապետ Կոնդյուօն-ի նախաձեռնութեամբ աշխատեցին, որ վերացնեն ժողովրդին քայքայող այդ սովորութիւնը, բայց

<sup>1)</sup> Թուի թէ նկարագրական տէրմինները ստեղծւած են քրիստոնէութեան առաջին գարերում, ընդգէմ հեթանոսական տէրմինների, և յետին ժամանակ չեն կազմուած. «Երեսաց տես» մուտք է գտել Ասուուածաշնչի թարգմանութեան մէջ. «Արիմելք ցՄառա ասէ. ահա ետու նազար սատեր եղրօր քում, այն եղիցի քեզ ի պատի երեսաց քոյց։» Ծնն. ի. 16.

անյաջող անցաւ և սովորութիւնը տեսում էր մինչև 1890-ական թւերը։ Ժամանակի ընթացքում իրենք լիոնցիք զլիսաւորապէս քաղաքակրթութեան ազդմամբ մեղմացրին աւերիչ սովորութեան ծանրութիւնը<sup>1)</sup>։

Հայերն էլ նոյն սովորութիւնը ունեցել են միատեսակ պատճառով և հետևանքով. Ներսէս Մեծից սկսած մինչև Ներսէս V, Դ—ԺԹ դարը, մաքառել է եկեղեցին այդ սովորութեան դէմ ժողովներով և հովական թրղթերով։ Ահա Գօշի խօսքերը, եկեղեցիներում ու վանքերում հոգեհացը սովորական կերուխումի, խնջոյիքի և քէֆի ձևով էր կատարուում. Պարտաւի ժողովը (8-րդ կանոն) հրամայում էր եկեղեցու դուները չըփակել այդպիսի ժամանակ, պատճառելով անկարգութիւնը, որ կատարում էին ուխտաւորները, և հոգեհացի ժողոված բազմութիւնը։ Կանոնագրքի II ՃԴ հ 1 103 (Էջ 413, 208) յօդւածներով արգելում է թէ անկարգութիւնը և թէ եկեղեցու դուները փակել։

«Բայց զնոգեհանգիստ իվանս առնել ոչ է ըստ օրինաց դատաստանի զրոց։ Խակ եթէ յաղագս անձեռնասութեան կամ յաղագս յուսոյ իվանս տարցեն և մսակերութիւն անդ առնդիցին, մի՛ լիցի քահանայից աշխարհի հակառակել յաղագս այսոցիկ, զի ոչ է դատաստան աւելի քան պկարն պահանջել և զոյլս հատանել, զի այլոց անկարգութեանց պարտին վրէժու խնդրել և ոչ յաղագս այսոցիկ» (Էջ 95—96, 1 դ.)։

Հոգեպաշտութեան և նախնեաց կուլտի ծիսական կեանքը տարբեր ցեղերի, քաղաքակրթութեան աստիճանի և ծագման ժողովուրդներին ևս յատուկ է. այդ պատճառով հոգեհացի սովորութեան թէ լիոներից հիւսում և թէ հարաւում ունեցած այդ միօրինակ պատկերը մի զարմանալի և անսպասելի երևոյթ չէր լինի և չէ իսկ, եթէ բաժանենք յիշեալ ծիսական կեանքից արտայատիչ մի տէրմին, որ երկու ժողովուրդների, հայոց և ուրուստիկոցոց, համար էլ միատեսակ իմաստունի մինչև այսօր։ Հայերը ունին 1) «Թաղման հաց» կամ քելեխ, կամ երեսի հաց, 2) «Հող» կամ ըգուհող, 3) «Ութ», 4) «Քառասունք» և 5) «Տարելից»։ Արէշում մի անէծք էլ կայ այդ տէրմիններից մէկով. — «Հողիդ

<sup>1)</sup> Сбор. свѣд. о Кав. ч. II 304—5 „Поминки по умершимъ.“

վայ տամ, կամ հողիդ նստեմ»։ Ուրուսրիկցիք ունին 1) «Աշ»=(թագման հաց, Արէշի մասնակի բառը «շիլաեյմա»), 2) Զեօլ=(ամսական հաց), և 3) Ռուց=(տարելիցի հացը)։ Գույն է, ահա, մարտին ընկնող այն մեծ տօները, որ յիշեցինք վերևում, նա հնչուում է ոչ թէ ոռւսական ձայնահնչմամբ Ռուց, որ այլակերպութիւն է ներկայացնում, այլ հայերէնի Հողը։ Տեղն է յիշելու, որ ոռւսերէնով զրել լեռնցոց տերմիններն ու լեզուական և բարբառի յատուկ օրինակները՝ գիտական ոչ մի նշանակութիւն չունի. հայերէնի շականները և ատամնային տառերը—թ, փ, ք, ջ, ձ, ճ, լծորդները—զ, ժ, շ, ց, զ, հ, դ, պ, ամենայարմարն են լեռնցոց բոլոր ձայների համար. Կոկորդային ձայնը միայն չունի հայերէնը, բայց այդ ձայնը նոյնպէս չունին միւս բոլոր լեզուները։ Սուլար Պ. Կ. այլհայլ տեսակէտներով,—որոնք իհարկէ իր լեզուագիտական որոշումների հետ կապ չունին,— ոռւսերէնն է համարել յարմարագոյնը և ստեղծել էլ է ոռւսերէն տառերով և տառերի բաղադրութեամբ կովկասեան այրուրեն<sup>1)</sup>. բայց նա խիստ անյարմար է օտարներին հրահանգ և ձեռնարկ ծառայելու. օտարներից բաւական է յիշել Հողէր Պեղերսընի հետ պատահած դէպքը, որ օօ թի հնչիւնը գտնելու համար, երեք չորս մեկսութիւններ և ձեռնարկներ քրքրելուց զինի, ստիպւած էր 29 տողի մէջ անորոշ ենթագրութեամբ գրադելու<sup>2)</sup> և ահա Ռուց=Հողը նոյնպիսի մի օրինակ է, որը յիշեցինք արդէն վերևումը և որից երեսում է որ հայերէն բառը թէպէտ կորցրել է ուրուսրիկցոց համար և նրանց աշքում իւր ծագումը, բայց իրրե հեթանոսական սովորութեան մի տերմին՝ անիմաստ նշանակութեամբ, մնացի է նրանց հոգեհացի ծիսական պաշտաման մէջ։



<sup>1)</sup> Սուլար Պ. Կ. „Աֆհազսկի յայկъ“, օ սուստուն ազբուկով դա կավ. յայկով, ստ. 48—51.

<sup>2)</sup> Հանդ. Ամս. 1906 VII էջ. 199.

## Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Հայոց և ուրուսրիկցոց ժողովրդագրական նիւթերի համեմատութիւնը զեռ աւելի երկար կարելի է շարունակել. բայց մեր առաջարկած զուգակիւններն էլ բաւական են որոշելու համար հայոց և լեռնցոց կուլտուրական յարաբերութեան սահմանը։ Զենք ուզում մոռանալ, որ, առհասարակ, Կովկասի ժողովուրդների կուլտուրական յարաբերութեան խնդիրը շատ բարդութիւններ ունի, շնորհիւ ժողովուրդների պատմական կեանքի խիստ փոփոխական վիճակի։ Աւելորդ չէ յիշել մի քանի տեսութիւններ այդ առիթով։ Պ. Կ. Սուլար հաստատել է, որ Կովկասը եղել է ճնշւած և թոյլ ժողովուրդների համար հանգստատեղի և ապաստարան. և նրա այդ տեսութիւնը ճիշտ է համարւած։ Ագաթանգեղոսը այդ տեսութեան մի ապացոյց է տալիս, երբ յիշում է Տարօնից հալածւած քրմերի խօսքերը. «Երթամք մեք ի բնակիչս լերինն կաւկաս՝ իկողմանս հիւսիսոյ. թերևս հնար լիցի և ապրեալք լիցուք<sup>1)</sup>։» Նոյն խնդիրը շարժել է նաև Հոլգեր Պեղերսըն, ելակէտ ունենալով արդէն բազմիցս նկատւած ճշմարտութիւնը թէ բարձր կուլտուրան միշտ յաղթող է, իսկ նրան գրացի յետամնաց ժողովուրդը—յաղթուող է.

«Նոյնահնչիւն կովկասեան բառերը, ասում է նա, հայերէնն առած ըլլալու են, քանի որ կովկասեան ժողովուրդը հայոցմէ քաղաքակրթութէն և քաղաքականօրէն վար էին, և անոնցմէ հայու թէ միակ բառ փոխառած ըլլան, մինչդեռ ընդհակառակն հայք իրենց սեպհական լեզուագանձը մեծաքանակ տուած են կաւկասեան ժողովրդոց<sup>2)</sup>։»

Ներկայ գէպքում անհնար է այլ կերպ մտածել, քան այս հայագէտն է կարծում այն պարզ պատճառով՝ որ մահմէղական ուրուսրիկցուց հայը երեք չէր կարող խաչ կոխելու երգման անունը ուսանել, այլ ընդհակառակն. այդ ակնյայտնի է։ Սակայն վերոյիշեալ տեսու-

<sup>1)</sup> Հմմտ. Պատմագիրք Հայոց, Ագաթանգեղոս. 1909 Տիկ. 406: Պ. Կ. Սուլար ուրիշ անգամ հազարդներ է հակառակ տեսութիւն, իրը թէ զաղթը և քաղաքակրթութիւնը կատարւած է հիւսիսից հարաւ, համաձայն կրմերեան աւանդութեան, որ հազորզում է Հերուդոս (Լակսկի յայկъ, Տիգլ. 1890, 25).

<sup>2)</sup> «Հայերէն և գրացի լեզուները» Հանդ. Ամս. 1906, IX 287.

թիւնսերը ընդհանուր և անկոնկրէտ բնոյթ ունին, մինչդեռ հայոց և ուրուսրիւցոց կուլտուրական յարաբերութեան խնդիրը շատ որոշ պաասսիանի է կարօտ: Պէտք է պարզել թէ երը, ինչպէս և ինչու ուրուսրիւցի թիւրքը հայից ուսաւ և ազգւցեց: Խնդիրը, իհարկէ, այդպէս ընդհանուրից մասնաւորելով, աւելի է դժւարանում նրա լուծումը. մասնաւանդ որ ուրիշները մեզնից տարրեր կարծիք են յայտնել արդէն: Նախ և առաջ Մ. Մ. Կովալեւսկի<sup>1)</sup> է ուսումնասիրել ուրուսրիւցոց կեանքը և նրա կարծիքն էլ ծանրակիւռ է ներկայ խնդրում:

Ուրուսրիւցին իր կուլտուրայով միւնայն օս ժողովուրդն է, ասում է յիշեալ հեղինակը: Օսի և ուրուսրիւցու մէջ եղած տարբերութիւնը հետևանք է մահմէղական մոլաների և շարիաթի<sup>2)</sup> վերջին ուռու-կովկասեան ընդհարումների ժամանակ գորացած ազգեցութեան: Մինչդեռ օսերը մերթ քրիստոնէութեան ազգմամբ, մերթ իրը կուլտուրական ձրգութերի ինկրցիայով մոռացութեան են աւել շատ բան նախնական հնութիւնից, ընդհակառակն՝ ուրուսրիւցիները, իրենց պահպանողական և ձևական-արարողական կրօնասիրութեան շնորհւէ, հնաւանդ շատ բան պահել են անփոփոխ վիճակով: Առնասարակ հիւսիս, Կովկասի թիւրք ժողովուրդը յազթական բոլոր ազգերի բաղդին է արժանացել: Նորա նախնիները, թւով գերազանց գտնելով, նւաճեցին օսերին և իշխեցին նրանց վրա, բայց միւնոյն ժամանակ, լինելով կուլտուրապէս յետամնաց, ազդեցին հպատակ օսերից, որնք բարձր քաղաքակրթութիւն ունէին, ապացոյց են աշխարհագրական և ամիսների անունները, խօսակցական շատ բառեր, ժողովրդական հաւատալիքների արարողութիւնները, գերեզմանների հնախօսական պարագաները և այլն,—որոնք նոյն են թէ օսի և թէ թիւրքի բնակավայրում: Դասակարգային կազմը և օրէնսդրական ու քաղաքացիական պատկերը նոյնպէս նոյն են: Զարմանալ կարելի էր, ի հարկէ, այն անտարբերութեան վրա, որով յազթական թիւրքը, խսպանուշաղութեան մասնելով իր անհատականութիւնը, ընդունել է ու սեպհականացրել օտար և քրիստոնեայ ժողովրդի օրէնքն ու դատաստանը, —եթէ մի-մի անալօգիաներ չըլինէին այդպիսի ստրկամիտ յարմարութեան գերմանացիները առ հառմէական օրէնքը, և սկանդինաւեան գաղութները առ քրանսիական և անդղիական դատաստանազիրքը: Զէնքը մի յաղթողն է եղած այդ բոլոր գէպերում, կուլտուրան միւս: Իւր այս տեսութեան իրը ապացոյց, Մ. Մ. Կովալեսկի, ահա, նկարպառում է, իթիւս այլոց, նաև խաչի երգումը, որը, իրը թէ, քրիստոնեայ օսից է ուրուսրիւցուն անցել („Ս քայլութեան այլ կազմակերպութիւն իւր աշխատանքու պահանջման մէջ այս պահանջութիւնը ունի առաջնական տեղունակութիւն, ինչպէս ու այլ պահանջութիւնների մէջ պահանջութիւնը ունի եղանակութիւն”):

Պարզ է, որ հեղինակը ուրուսրիւցու անցեալի ինդիբը սպառել է այն մտքով, որ յաղթական թիւրքը իր արդի վիճակով ուրիշ ոչ չէ, քան եթէ ինքը օսը: Բայց երբէք չի կարելի համաձայնել հեղինակի հետ թէ նրա մեն մի պատճառաբանութեան և թէ ընդհանուր եղրակացութեան առիթով: Եւ ահա թէ ինչու ուրուսրիւցու ազգագրական նիւթերը իրենց մի առանձնացած և տարբեր մասով վկայում են, որ Ուրուսրի գիւղում բացի օսականից օտար մի ուրիշ տարր ևս կայ, մի հնաւանդ և հեթանոսական տարր, որ ոչ օս ժողովուրդն ունի և ոչ որևէ լինսական ուրիշ ցեղ: Այդ տարրի ծագումը, ըստ Մ. Ա., օսական է. իրը թէ օսերը առաջ ունէին այն տարբեր և յետոյ քրիստոնէութեան ազգմամբ մոռացել են, մինչդեռ թիւրքերը, իրեկ յետամնաց ժողովուրդ, մի անգամ վոխի առնելուց յետոյ պահել են այն անփոփոխ: Նախ և առաջ ինքը այսպիսի բացատրութիւնը սխալ է, նրա համար, որ օսերը, օր, հայերի համեմատութեամբ աւելի պահպանողական են, այդ է վկայում նրանց համայնական կեանքը և նոքա պահել են շատ հեթանոսական տարր իրենց կրօնական, քրէական և ընտանեկան կեանքում, համաձայն իրա իսկ, հեղինակի նկարագրութեան „Родовоий бытъ“, Законъ и обычаи на Кавказѣ“ աշխատանքների մէջ: Ուստի եթէ հայերը պահում են հեթանոսական տարբերը մինչև այսօր ուրուսրիւցոց հետ համերաշխ, ինչպէս տեսանք արդէն, որչափ ևս առաւել օսերը պէտք է պահած լինէին նոյնը, եթէ արդարեւ ունենային նոքա այն տարբերը: Միւս կողմից օսերի քրիստոնէութեան մէջ հայերին գերազանցելու ոչ մի ապացոյց չունինք և ընդհակառակն զիտենք, որ լեռնցիք, նրանց թւում նաև օսերը, կրօնափոխութեան, իրը կեանքը, զոյքը և հողը ապահովելու միջոցի, վրա անտարբեր աչքով են նայել նոտւմ: (Տես ներքեւ նոյն հեղինակի խօսքերը): Մեղ թւում է, որ այս խնդրում Մ. Ա. աւելի է ոգեսրել իր իդէայով, օսական ազգեցութեամբ, քան նիմք ունէր զրա համար<sup>1)</sup>: Այդ բոլոր ժամանակ հեղինակը անուշաղիր է թողել մի-

<sup>1)</sup> Հակառակ քրանսիական առածին—comparaison n'est pas raison—համեմատութիւնը ապացոյց չէ:

ինդիր, որը ինքնըստինքեան պէտք է լինէր՝ ահա, ուշուսրիկցուն յատուկ և օսին օտար ազգագրական նիւթերի ծագման մի մեկնութիւն։ Եւ արդարեւ, յաղթական թիւրքը, որը, ըստ Մ. Մ., այնքան կուլտուրապէս անկազմակերպ հոգի ունէր, որ ամբողջապէս օսական կեանքին յարեց, այդ թիւրքը՝ նախ քան ելքրուսի բարձունքին հասնելը, անցել էր իրանական և հնդ-եւրոպ. կուլտուրաների աշխարհով—Պարսկաստանով և Հայաստանով. թիւրքը կանգ էր առել այդ ճանապարհի վրա, և դարերով ապրել էր իրենից շատ բարձր քաղաքակըրթութեան տէր յիշեալ ժողովուրդների մէջ. արդ՝ նախ քան օսին հանդիպելը, այդ ասիսկան հրոսը չէր ազգւել արդեօք որևէ կուլտուրայից, չունէր իսպառ կրթութեան պաշար, գէթ այնքան, որ օսականին հնժարկւելու տրամադրութիւն ստեղծւած լինէր առաջուց. թէ նա, իսկապէս, խորշեց իր աշխարհակալութեան դարաւոր կեանքում ամեն խառնումից, և իրքեւ մաքուր տախտակ հանդիսացաւ՝ օսական կուլտուրան դրոշմելու համար։ Այդ հարցը չէ յարուցւած Մ. Մ. յօդւածների մէջ։ Մեր զուգակշիռները պատասխան են այդ ինքրին։ Խաչի երդումը, հոգի հոգեհացը, հարսանեկան բարձ փոխեն ու քաջնկերը—բոլորը հայկական միջնադրբեան կուլտուրային յատուկ են եղած. միւս նմանութիւնները թէպէտ չեն պահել ճանապարհորդների նկարագրութեան մէջ այնպիսի հետք, որ նրանց մէջ լեզւական առնչութիւն նկատւէր, սակայն նրանց էլութիւնը հասնում է մինչև Մովսիսական օրէնքը և այնտեղից էլ Գօշի դատաստանագիրքը. այդպէս է սովորութիւնը միամեայ ժամանակամիջոցի՝ վաճառքը յետ զնելու համար, և կաթնեղբարութեան օրէնքը։ Երեսոյթը ինքը միանգամայն հասկանալի է և բնական է. այդ փոխառութիւններից շատերը հեթանոսական քնոյթ ունին, արգելւած էին հայոց դատաստանագրքով և եկեղեցու կսոնոններով։ Մովորութիւնների այդ առանձնայատուկ բնոյթը մահմէդականութեան համար խորշելի չէր և դիւրին ըմբռնելի, իսկ տերմինների փոխառութիւններ ևս առաւել հասկանալի պատճառ ունին, արդար քանի որ թէ հեթանոսական ծագում ունէին նրանք և թէ անհասկանալի էին։

Այդպէս է, օր., կըրտ սեմիտ, արմատը, որ նշանակում է թլիփատութիւն, մեր ժողովուրդը «կրտել» ասելով հասկանում է լծի գոմէշներին, եզներին, մասցու ոչխարներին և մարդկանց ներքինացնելը. «քեառթ» անել նշանակում է ծառերի վրա կտրւածք անել կամ սահմանի կամ սեպհականութեան իմաստով. «քեառթ» նշանակում է թլիփատեալ առնանդամ. միւնոյն ժամանակ քրիստոնէական սուրբ արարողութիւնը մկրտութիւն է կոչւում, որ նոյն արմատից է<sup>1)</sup>։

Գալով օսական ազգեցութեան, նա էլ ունի որոշ և սոսկ անտեսական պատճառ։ Դեր է խաղացել այդ շարժման մէջ երկու հանդամանք։ Առաջինը՝ կրօնակիութիւնը, որ միջին դարերում կատարւում էր մերթ բռնի և մերթ կամաւոր ցանկութեամբ։ Կամաւորապէս կրօնակոփի էին լինում այն քրիստոն. օս առւները, որոնք դրացի առւների մէջ չեզոքացած էին որևէ ցեղական, վրիժական կամ այլ պատճառով։ Նրանք ապաւինում էին յաղթական ժողովրդի, ներկայ դէպքում, թիւրքի կրօնին, իրենց հոդին ու ջուրը պաշտպանելու համար. ինքը Մ. Մ. Կովալևսկի մի տեղ ենթադրում է, որ Ռեբուսին երկի հիմնած է այդպիսի հանդամանքի հետեանքով—«զուցէ որևէ պատճառից զրդւած, բնիկ ագգարնակութիւնը մահմէդականութիւն է ընդունել իր նախնական օս ծագումը մոռանալով իսպառ։» Նոյն իսկ հարաւային կովկասում այդ երկոյթը դոյցութիւն ունէր միջին դարում։ Երկրորդ՝

Ցաղթական թիւրքերը բնականօրէն որոնում էին աշխատող ձեռքեր և հովանաւորում էին ամենքին, ով դիմում էր նրանց։ Այդ ձգտումը պատճառ եղաւ, որ տոհմական, բացառապէս մի ցեղով հիմնած, համայնական տուլլը ընդունեց իր մէջ այլեւալ ցեղեր և ժողովուրդներ, և կազմուեցին արեան խառնակութիւններ և պղպարական տարբերութիւններից բաղկացած այնպիսի զաղթավայրեր, ինչպիսին են Ազրակովսկի և Սուսանները իշխանները ընդունել են իրենց հովանաւորութեան տակ բոլոր այն օտարներին, որոնք վլէժի կամ այլեւալ պատճառներով, իրենց հոդից հրաժարւելով, հպատակութիւն ցուցին, ծառայելով և հարկ տալով առավ իշխանին<sup>2)</sup>։

1) Պր. Ն. Մառ. «Մկրտութիւն Հայոց, Վրաց», արարական վերսիա. Արարատ 1910 հոկտ. 89., Հմմա. «Մատուք. հետազոտ. Ղուկ. Բաղրուպանեան Հանդ. Ամս. 1908. V 153ր, 22<sup>2</sup>.

2) Մ. Մ. Կովալևսկի. «Ս պօջական թէլլուրուսական աշխատանքներ» 1886 լ. 553.



Ահա այդ կերպ քրիստոնեայ օս ժողովուրդը պակասեց. նրա ազգային կևանքից բաժանւեց մի մեծ հատած և միացաւ եկտոր տարրի հետ, ու ապրեց տարբեր «եարլըկի» տակ. մինչդեռ այդ հատածի արտաքին յարաբերութեան կերպը փոխւեց, նրա ներքին կուլտուրական կեանքը մնաց նախնականը, օսականը: Այսօր Ուրուսարիում այդ տարրի շնորհիւ է պահւած զլիաւորապէս օսական կուլտուրան. ազգագրական նիւթերը, ամիսների և աշխարհագրական անունները, խօսակցական բառերը, գերեզմանների հնախօսական իրերը այդ կրօնափոխ եղած բնիկ տարրից են մնացել և նրա շնորհիւ:

Ամփոփելով, տեսնում ենք հետեւեալը. յաղթական սելջուկեան և այլ մոնղոլ ժողովուրդները երկար դարեր ապրելով իրանական ցեղերի և հայերի մէջ, ազգւել են նրանցից, իրացրել են նրանց կուլտուրայի հեթանոսամիտ տարրերը. յետոյ տարածւելով լեռներում, այլ այլել են իրենց թէ նախնական և թէ փոխառեալ կուլտուրական կեանքը նորանոր խառնակութեամբ և օսական ազգեցութեամբ: Մեր թւած զուգակշինների նոյնութիւնները այդ պատմական հանգամանքի հետևանքն են, իրեկ մնացորդներ հայկական ազգեցութեան: Ուստի այն հին հեթանոսական սովորութիւնները, որոնք միայն թիւրքերն ունին և որոնց օների մէջ բացակայելը Մ. Ա. մեկնում է իրր քրիստոնէական ազգեցութեամբ ջնջւած, նորա մնացորդ են թիւրքերի նախառոսական պատմական շրջանից: Հպատակ օների մէջ այդպիսի սովորութիւնները բացակայում են յապացոյց այն հանգամանքի, որ յաղթական թիւրքը, իրեկ մուրացածոյ և անհարազատ կուլտուրայի աէր ժողովուրդ, բնականորէն՝ թոյլ գանւեց օներին ընդունել տալու իր մուրացածոյ կուլտուրան, որ բերել էր հարաւից. միայն մի կէտում թիւրքը բարոյական ոյժ արտայայտեց. շնորհիւ մահմէզականութեան, նա պահպանեց այն բոլոր մուրացածոյ սովորութիւնները, որոնք կովկասի հայերը, հեթանոսութեան շրջանից ստանալով, աւանդեցին իրենց յաղթական աէրերին:



55.361